ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՀԻԴՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ՑԱՆՑԻ ՄԱՍԻՆ

Սույն Համաձայնագրի մասնակից պետությունների Կառավարությունները, այսուհետ՝ Կողմեր,

գիտակցելով հիդրոօդերեւութաբանական տեղեկության պարբերական ստացման եւ օգտագործման կարեւորությունը պետությունների անվտանգության ապահովման եւ տնտեսական ու բնապահպանական բնույթի որոշումների ընդունման հարցում,

ընդունելով հիդրոօդերեւութաբանական պայմանների եւ շրջակա բնական միջավայրի այլ բնութագրիչների գնահատման համար դիտարկումների ազգային, տարածաշրջանային եւ գլոբալ համակարգերի գործունեության միջպետական համաձայնեցման մեծ նշանակությունը, արտահայտելով հիդրոօդերեւութաբանական ցանցերի կազմակերպման եւ զարգացման բնագավառում համագործակցելու պատրաստակամություն, ղեկավարվելով "Հիդրոօդերեւութաբանության բնագավառում համագործակցության մասին" 1992 թվականի փետրվարի 8-ի՝ Համաձայնագրի դրույթներով, համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1

Սույն Համաձայնագրի նպատակների համար ստորեւ բերված հասկացություններն ունեն հետեւյալ նշանակությունը.

ԱՊՀ միջպետական հիդրոօդերեւութաբանական ցանց (ԱՊՀ ՄՀՕՑ)՝ ազգային դիտարկող կազմակերպությունների ընտրովի դիտակետերի ինտեգրացված համակարգ, որը տեղեկության առումով ապահովում է Կողմերի պահանջարկը հիդրոօդերեւութաբանական պայմանների եւ շրջակա բնական միջավայրի այլ բնութագրիչների մասին,

ազգային հիդրոօդերեւութաբանական ցանց՝ Կողմերից մեկի պետական ցանցային դիտարկող այնպիսի կազմակերպությունների ամբողջություն, որոնք իրականացնում են հիդրոօդերեւութաբանական պայմանների եւ շրջակա բնական միջավայրի այլ բնութագրիչների նկատմամբ դիտարկումներ:

ՀՈԴՎԱԾ 2

ԱՊՀ միջպետական հիդրոօդերեւութաբանական ցանցի գործունեության ապահովման բնագավառում Կողմերի համագործակցությունն իրականացվում է հետեւյալ ուղղություններով.

ազգային հիդրոօդերեւութաբանական ցանցերի, ինչպես նաեւ գոյություն ունեցող հաղորդակցական ենթակառույցների հիման վրա հիդրոօդերեւութաբանական պայմանների եւ շրջակա բնական միջավայրի այլ բնութագրիչների դիտարկման միջպետական համակարգի ձեւավորում եւ գործունեության ապահովում,

աջակցություն ԱՊՀ ՄՀՕՑ-ի բաղադրամասերի զարգացման ստրատեգիայի եւ համապատասխան համատեղ գիտատեխնիկական ծրագրերի մշակմանը եւ իրագործմանը,

աջակցություն ԱՊՀ ՄՀՕՑ-ի գործունեության իրավական, նորմատիվ-մեթոդական, չափաբանական, տեխնոլոգիական եւ ծրագրաապարատային ապահովմանը:

ՀՈԴՎԱԾ 3

ԱՊՀ միջպետական հիդրոօդերեւութաբանական ցանցի հիմնական խնդիրներն են.
հիդրոօդերեւութաբանական պայմանների եւ շրջակա բնական միջավայրի այլ բնութագրիչների մասին ժամանակին, հավաստի եւ լիարժեք տեղեկություն ստանալը, այդ թվում՝ վտանգավոր հիդրոօդերեւութաբանական պայմանների առաջացման եւ աղտոտվածության բարձր մակարդակի մասին՝ բնական եւ տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակներից տնտեսության եւ բնակչության պաշտպանության միջոցների ձեռնարկման նպատակով,
մակերեւութային ջրերի աղտոտվածության մակարդակների մասին եւ անդրսահմանային ջրային օբյեկտներում ջրի ծախսերի մասին տեղեկություն ստանալը, մթնոլորտային օդով աղտոտող նյութերի անդրսահմանային տեղափոխման դիտարկումների ապահովումը,
դիտարկման մեթոդների միասնականության, չափումների պահանջվող ճշգրտության եւ համադրման, տեղեկատվական արտադրանքի հավաստիության ապահովումը:

ՀՈԴՎԱԾ 4

ԱՊՀ միջպետական հիդրոօդերեւութաբանական ցանցը ձեւավորվում է հիդրոօդերեւութաբանական պայմանների եւ շրջակա բնական միջավայրի այլ բնութագրիչների դիտարկումների՝ գոյություն ունեցող ազգային ցանցերի եւ տվյալների հավաքման, մշակման ու տարածման տեխնոլոգիաներին տիրապետող գործող կառույցների հիմքի վրա:

ՀՈԴՎԱԾ 5

Անկախ Պետությունների Համագործակցության հիդրոօդերեւութաբանության միջպետական խորհուրդը, որպես Անկախ Պետությունների Համագործակցության համակարգող ինստիտուտ, ըստ ազգային հիդրոօդերեւութաբանական ծառայությունների գործունեության հիմնական ուղղությունների՝
որոշում է ԱՊՀ միջպետական հիդրոօդերեւութաբանական ցանցի կազմը (դիտարկման կայանների կետերի ցանկը) եւ տարբեր տեսակի դիտարկումների մեթոդական ապահովման իրականացման մեխանիզմները,
ԱՊՀ ՄՀՕՑ-ի գործունեության հետ կապված հարցերը լուծելիս ապահովում է ազգային հիդրոօդերեւութաբանական մարմինների փոխգործակցությունը:

ՀՈԴՎԱԾ 6

Կողմերն աջակցում են ԱՊՀ միջպետական հիդրոօդերեւութաբանական ցանցի՝ ժամանակակից չափիչ գործիքներով եւ սարքավորումներով, չափումների կատարման սահմանված կարգով հավաստագրված մեթոդիկաներով, աշխատանքային չափանմուշներով,

տվյալների փոխանցման համար հաղորդակցական ուղիներով, ինչպես նաեւ դրանց մշակման համար ավտոմատացման եւ հաշվողական տեխնիկայի միջոցներով ապահովմանը:

ԱՊՀ ՄՀՕՑ-ի գործունեության արդյունքում ստացված տեղեկությունը Կողմերի օգտագործման համար մատչելի է եւ ազատ:

ՀՈԴՎԱԾ 7

ԱՊՀ միջպետական հիդրոօդերեւութաբանական ցանցի ֆինանսավորումն իրականացվում է ազգային հիդրոօդերեւութաբանական ծառայությունների, ինչպես նաեւ շահագրգիռ կազմակերպությունների՝ ներառյալ Համաշխարհային օդերեւութաբանական կազմակերպության եւ այլ միջազգային հիմնադրամների միջոցների հաշվին:

Կողմերը ինքնուրույն են ներգրավում ֆինանսական միջոցներ սույն Համաձայնագրով ստանձնած իրենց պարտականությունները կատարելու համար:

ՀՈԴՎԱԾ 8

Սույն Համաձայնագրի կատարման համար պատասխանատու ազգային հիդրոօդերեւութաբանական մարմինների միջեւ փոխգործակցությունը կարող է իրականացվել առանձին պայմանավորվածությունների հիման վրա, որոնք չեն հակասում սույն Համաձայնագրի դրույթներին:

Կողմերը իրականացնում են իրենց գործունեությունը սույն Համաձայնագրի շրջանակներում՝ իրենց օրենսդրությանը համապատասխան:

ՀՈԴՎԱԾ 9

Սույն Համաձայնագիրը չի շոշափում Կողմերի՝ սույն Համաձայնագրում ընդգրկված հարցերի վերաբերյալ միջազգային պայմանագրերով կամ այն միջազգային պայմանագրերով ստանձնած իրավունքներն ու պարտավորությունները, որոնք կարող են կնքվել սույն Համաձայնագրի առարկային եւ նպատակներին համապատասխան:

ՀՈԴՎԱԾ 10

Սույն Համաձայնագրի կիրառման եւ մեկնաբանման հետ կապված վիճելի հարցերը շահագրգիռ Կողմերի միջեւ լուծվում են խորհրդակցությունների եւ բանակցությունների միջոցով:

ՀՈԴՎԱԾ 11

Սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ եւ լրացումներ: Փոփոխությունները եւ լրացումները ձեւակերպվում են առանձին արձանագրություններով, որոնք սույն Համաձայնագրի անբաժանելի մասն են եւ ուժի մեջ են մտնում սույն Համաձայնագրի 12-րդ հոդվածով նախատեսված կարգով:

ՀՈԴՎԱԾ 12

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում այն ստորագրած Կողմերի կողմից Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգի

կատարման մասին երրորդ ծանուցագիրը ավանդապահին ի պահ հանձնելու օրվանից:

Անհրաժեշտ ընթացակարգերն ավելի ուշ կատարած Կողմերի համար սույն Համաձայնագիրն ուժի մեջ կմտնի համապատասխան փաստաթղթերը ավանդապահին ի պահ հանձնելու օրվանից:

ՀՈԴՎԱԾ 13

Սույն Համաձայնագիրը կնքվում է հինգ տարի ժամկետով եւ այդ ժամկետը լրանալուց հետո ինքնաբերաբար կերկարաձգվի հաջորդ հնգամյա ժամանակաշրջաններով, եթե Կողմերն այլ որոշում չընդունեն:

ՀՈԴՎԱԾ 14

Յուրաքանչյուր Կողմ կարող է դուրս գալ սույն Համաձայնագրից՝ այդ մասին դուրս գալուց ոչ ուշ, քան վեց ամիս առաջ գրավոր ծանուցում ուղարկելով ավանդապահին, կարգավորելով սույն Համաձայնագրի գործողության ժամանակ առաջացած ֆինանսական եւ այլ պարտավորությունները:

ՀՈԴՎԱԾ 15

Սույն Համաձայնագիրը բաց է դրա սկզբունքները եւ նպատակներն ընդունող այլ պետությունների կողմից միանալու համար՝ միանալու մասին փաստաթղթերը ավանդապահին հանձնելու միջոցով:

Կատարված է Մոսկվա քաղաքում 2001 թվականի մարտի 16-ին՝ մեկ բնօրինակով, ռուսերեն: Բնօրինակը պահվում է Անկախ Պետությունների Համագործակցության Գործադիր կոմիտեում, որը սույն Համաձայնագիրը ստորագրած յուրաքանչյուր պետության կուղարկի դրա հաստատված պատճենը:

* Համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2002 թվականի ապրիլի 25-ից: